Հակիրճ վարքից ու դիմանկարից անմիջապես հետո սկզբնավորվում է բուն սյուժեն, և մի քանի նախադասություն անց կոնֆլիկտ է ստեղծվում քրիստոնյայի ու մահմեդականի միջև: Ընդ որում՝ դա կարող է առաջանալ ամենաչնչին առիթի դեպքում իսկ, և կոնֆլիկտի առիթ միշտ որոնում են մահմեդականները: Այնուհետև հավաքվում է մահմեդականների ամբոխը, և քրիստոնյային տանում են դատարան:

Եթե մինչ այս պահը վկայաբանություններում մանրամասնությունները, ինչպես, օրինակ, կոնֆլիկտի առաջացման պատճառները կարող են լինել տարբեր, ապա սյուժեի զարգացման այսպես կոչված՝ «դատարանային» հատվածը կանոնիկ-կաղապարային է՝ ընդհուպ դատավորի ու դատապարտյալի երկխոսությունը: Քրիստոնյային առաջարկվում է փոխել կրոնը, հակառակ դեպքում՝ մահապատիժն անխուսափելի է: Ընդ որում՝ այդ առաջարկից բացի, տրվում են գայթակղիչ խոստումներ, որոնք միշտ նույն բովանդակությունն ունեն: Բերենք օրինակներ տարբեր վկայաբանություններից. «Ասաց դատաւորն Նիկօղայոսին՝ «...Տամ քեզ ***բազում գանձս և սպացոածս պատրականս, և կին գեղեցիկ***» (էջ 402), «և դատաւորն բազում բանս խոսեցաւ ընդ նմա, և բազում բարութիւնս խոստացաւ տալ նմա՝ ***գանձս և սպացոածս, և կին, և պետական իշխանութիւնս...»*** (էջ 405), և այլն: Տարբերությունն այստեղ թերևս այն է, որ դատավորի խոսքը մի դեպքում ներկայացվում է երկխոսության ուղղակի, մյուս դեպքում՝ անուղղակի կերպով:

Քրիստոնյայի՝ դատավորին պատասխանի օրինակներ տարբեր վկայաբանություններից, որոնցում նույնպես առկա են տեքստային համընկնումներ. «Ես ***զլոյս հաւատս իմ ոչ թողում***, և զուղիղ օրէնս Քրիստոսի Աստուծոյ իմոյ ոչ փոխանակեմ ընդ ձերդ օրինաց» (էջ 402), «...ես զՔրիստոս Աստուածն իմ ոչ ուրանամ, և ***զլոյս հաւատս իմ ոչ թողում***, և սուտ ***օրինաց ձերոց ոչ հաւանիմ***» (էջ 405), «***Զլոյս հաւատս իմ ոչ թողում***, և խաւար ***օրինաց ձերոց ոչ հաւանիմ***» (էջ 413), և այլն: